ԳԱԳԻԿ ԽԱՉԻԿՅԱՆ

ԱՎԵՏԻՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻ «ՀՈԳՈՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ» /«Մենության մեջ» գիրքը/

«Մենության մեջ» գիրքը տպագրվել է այն շրջանում, երբ Ահարոնյանը կաթվածահար լինելու հետևանքով, ի վիճակի չէր գրական գործունեությամբ զբաղվելու: Ուստի նա չի կարողացել գիրքը կազմել և վերանայել անցյալում կատարած գրառումները:«Մենության մեջ» գիրքը լույս է տեսել Նյու Յորքում,1938 թ.: Հրատարակիչը «Երկու խոսքում» վկայում է հետևյալի մասին. «Այս հատորը, որքան էլ իր գեղարվեստական ձևի մեջ գրեթե լրացած, եթե հրատարակվեր հեղինակի կողմից, հավանաբար, ինչ-ինչ փոփոխությունների և հղկումների ենթարկվեր: Բայց հեղինակի գրիչը տարիներից ի վեր լռել է և, ո՛վ գիտե, թե երբևիցե նորից պիտի շարժվի՞ այն: Ահա թե ինչու՝ որոշեցինք լույս ընծայել այս հատորը այնպես, ինչպես որ է, ղեկավարվելով հեղինակի այն ցուցմունքներով, որոնք կցված էին ձեռագրին»[1]: Հրատարակիչը տպագրված գրքում ընդգրկել է նաև այն գործերը, որոնք նշված չեն եղել հեղինակի կազմած ցանկում, սակայն եղել են գրքի ձեռագրերի մեջ: Այս հանգամանքն ընդգծում ենք այն պատճառով, որ այս գրքում ընդգրկված ստեղծագործություններից շատերը գրվել են 1900-ական թվականներից սկսած /տարեթվով նշված ամենավաղ գրված երկը ստեղծվել է 1906 թ./: Դրանք վերանայվել և համալրվել են ամենայն հավանականությամբ 1920-30-ական թթ. /կան գրության տարեթիվ չունեցող բազմաթիվ ստեղծագործություններ/: Ակներև է, որ գրողի ծանր հիվանդության հետևանքով այս գիրքը կազմելու ուղղությամբ կատարված աշխատանքն անավարտ է մնացել: Ինչևէ. «Մենության մեջ» գրքում ընդգրկված են գրողի՝ 20-րդ դարի առաջին տասնամյակներում գրած արձակ բանաստեղծությունները, փոքրիկ պատմվածքները, խոհերը, երկու չափածո երկ: Այստեղ զետեղված արձակ գործերն անցյալում չեն տպագրվել: Դրանք գրողը թերևս համարել է իր «հոգու կենսագրության» /ինչպես Հ. Թումանյանն է ասել իր քառյակների կապակցությամբ/ դրվագները և մտադրվել է համալրել ողջ կյանքի ընթացքում:

Ահարոնյանը մինչև այս գրքի ձեռագիրը վերանայելուն հասնելը աշխարհաճանաչողության մեծ ճանապարհ էր անցել: Եվրոպայում կրթված, կենսական բազում խոչուխութեր ունեցող ուղիներով անցած գրողը գեղարվեստական

ծավալուն ստեղծագործություններով ինքնարտահայտվելուց բացի իր ներանձնական մտորումները, իր «ներքին մարդու» խոհերը նաև փոքրածավալ գրական երկի տեսակով «մենության մեջ» արտահայտելու կարիք էլ է զգացել: Հետևենք գրքում արտահայտված նրա տրամադրություններին ու խոհերին, բացահայտենք դրանց ենթատեքստը և առնչություններն իրականության հետ: Նախ նկատենք, որ գրողը տարբեր տարիներին կատարած այս գրությունների մեջ հավատարիմ է մնացել իր մարդկային խառնվածքին, գեղագիտական նախասիրություններին: Նրա կողմից իր բնավորության հուզական, զգացմունքային, ռոմանտիկ էությունն է հաստատվում ու բացահայտվում «Սի՛րտ իմ» արձակ բանաստեղծության մեջ:

Փառքն ու ճանաչումը երկար են ուղեկցել Ահարոնյանին, սակայն ինքն իր հետ անկեղծանալով՝ նա գտնում էր, որ իր խոսքի չափով թերևս ինքը չի գործել: Ուստի գրողը ճնշված էր զգում իր խոսքի ու գործի անհերդաշնակությունից /«Փառքը»/էջ 13//: Սեփական թուլությունը խոստովանելն ուժեղ լինելու մասին է վկայում: Չէ՞ որ մարդու թուլությունը ոչ միայն սուբյեկտիվ զգացողություն է, այլև պայմանավորված է միջավայրի օբյեկտիվ հանգամանքների ազդեցությամբ: Գրողին մխիթարում է այն, որ իր կյանքում, անցնելով դաժան փորձությունների միջով, չարիք չի գործել, գեղեցիկը չի ավերել. Ու թեև մարդկանց վատությունը հաճախ է հիասթափեցրել նրան, բայց և այնպես նա չի վհատվել /«Աստղեր ու արշալույս»/: Բայցև դժվար է եղել հոգու հաստատակամությունն ու ամրությունը պահպանելը. չէ՞ որ բազում հույսեր ու երազներ են մահացել: Ուստի. «Հոգիս ավերակ տաճար է» /էջ 19/, - պատկերավոր կերպով խոստովանում է գրողը 1917 թ. գրառած «Հոգիս» խոհի մեջ:

Քնարական մտորումների միջոցով նա իր կյանքի ճանապարհին ծնված խոհերն էր խտացված արտահայտում ու գեղակերտում՝վերարծարծելով աշխարհի չարի ու բարու բազում դրսևորումների արձագանքներն իր հոգում /«Գողգոթան», «Չարիքը»/: «Չարիքը» քնարական «մանրակերտ» խոհի մեջ գրողն, անցյալը վերհիշելով, ափսոսանք է հայտնում, որ մայրական հոգածության գեղեցիկ խորհրդանշանները կյանքի թոհուբոհի մեջ, «չարի» ու նենգության հետ բախվելիս, դժբախտաբար, չէին օգնել նրան. «Չարիքը ստվերի պես կրունկիս կախված մնաց և նենգությունը օձի պես սրունքներիս գալարվեց. Մա՛յր իմ, մա՛յր իմ, մոռացա՞ր արդյոք խաչակնքել օրրանս. մա՛յր իմ, չար աչքերի դեմ դյութական հուլունքներդ ո՞ւր կորան: Հուլիս,1917» /էջ 23/:

Արձակագրի տրամադրությունների, հոգեվիճակների, ինքնագնահատումների, հաճախ հոռետեսական մտորումների հիմքերն ու դրդապատճառները նրա հոգեկերտվածքով պայմանավորված լինելով հանդերձ ունեին, անշուշտ, նաև հասարակական ու պատմական նախադրյալներ ու հիմքեր: Գրքում ընդգրկված

երկերի մի մասը գրված են 1917-18թթ., երբ նա ազգային քաղաքական կյանքում կոչված էր ակտիվ ու կարևոր դերակատարություն ունենալ, սակայն միջազգային պատմաքաղաքական հանգամանքները խանգարում էին իրականացնել ազգանպաստ որոշումներն ու ծրագրերը: Բացի այդ, կատարվել էր ամենասարսափելին՝ 1915թ. Մեծ եղեռնը: Ահարոնյանը կոչված էր բանակցություններ վարելու եղեռնագործ թուրք պաշտոնյաների հետ, ապարդյուն ջանքեր գործադրել կոտորածներից ազատվածներին փրկելու համար: Իր ներաշխարհում, մենության մեջ գրողը փորձում էր մի անգամ ևս իմաստավորել տեղի ունեցածը, արտահայտել իր զգացածը: Հայկական եղեռնի նման ահռելի ոճրագործությունը, իրոք, դժվար է գեղարվեստորեն պատկերել,- արտահայտել դրա ողջ սարսափները: Եվ ահա նա գրում է. «Հոգիս քնար է, որ խինդից ավելի՝ ցավով հեծեծաց մինչև որ մի ուժեղ ու խորունկ վիշտ փշրեց լարերը ու համր դարձրեց.

Հզոր ու դաժան ցավը ո՛չ քնար ունի և ո՛չ երգ ունի: Փետրվար,1918» /էջ 27/: Ամեն դեպքում գրողը միշտ ակտիվ կենսադիրքորոշում ունի: Նա անտարբեր չի կարող մնալ «մարդկային թշվառության» հանդեպ և միշտ կարեկցանքով է լի կյանքի հատկին հայտնվածների նկատմամբ: Մարդկանց նեցուկ լինելու նրա պատրաստակամությունն այնքան սրտաբուխ է, այնքան անմիջական, որ նրանց օգնության ձեռք մեկնել չկարողանալու դեպքում ինքն է իրեն թշվառ ու կարեկցանքի արժանի համարում: Իր ներաշխարհում խորը ողբերգություն և վիրավոր հոգի ունենալու /«Լռությունը»/ մասին զգացողությունն, ըստ էության, առնչվում էր նաև կյանքի իմաստի մասին նրա յուրօրինակ պատկերացումների հետ: Նրա համար **իմաստությունը, վիշտը և կարեկցությունը** համարժեք են և մարդուն ակտիվ գործունեության ու գեղեցիկն արարելու մղող հզոր խթաններ, ուստի և կյանքի իմաստն են նրանք. /«Կյանքի իմաստը» /էջ 37/:

Ահարոնյանին միշտ են հետաքրքրել մարդու և տիեզերական երևույթների առնչությունները, հավիտենականի ու ժամանակավորի, իրականության ու մարդկային պատրանքների փոխհարաբերության մասին փիլիսոփայական խնդիրները: Դրանց գրողն անդրադարձել է նաև այս փոքրածավալ արձակ երկերում: Դրանցում նրան շարունակ հետաքրքրում են կրոնի ու իրականության առնչությունները: Ուշագրավ է, որ այստեղ ևս կրոնական հավատի ու հանդերձյալ կյանքի մասին պատկերացումները նա սերտորեն պայմանավորում է մարդկանց կյանքի սոցիալական հանգամանքներով և հատկապես թշվառ կացությամբ /«Անմահություն»/ /էջ 35/: Աստծու կերպարում և գաղափարի մեջ տարբեր ժամանակներում, տարբեր նրբերանգներով մարդիկ արտահայտել ու մարմնավորել են նաև իրենց իդեալը մարդու գերագույն, կատարյալ կեցության մասին: Այդ պատկերացումները մասնակի կամ շրջադարձային փոփոխություն են կրում, երբ մարդկանց երևակայությամբ ստեղծված աստ-

վածները չեն իրականացնում նրանց հավատացողների անձնական ու հասարակական իդեալները: Ահարոնյանն ահա Աստծու պաշտամունքի հանդեպ ներքուստ անհամերաշխ, ժխտական դիրքորոշում ուներ: Այս հարցում նրան հատկապես Ֆ.Նիցշեի ըմբռնությունն էր գրավում, քրիստոնեական կրոնի Աստծու մահվան ու նոր աստված որոնելու մասին նրա գաղափարը: Այսպիսի հայեցակետից էլ նա գրում է. «Խուճապած ամբոխների թշվառության ու ցավի հետ, մենք մեր հոգիների ու մտածումների մեջ - Աստծու թաղումը կատարեցինք այն գիշեր: Թաղեցինք Աստվածը և հետո՝ մեր ցասումի շունչով ճամփա ընկանք մի նոր Աստված փնտրելու: Հունիս, 1918»/«Ցասումն»/ / էջ 72/:

Նրան բնական ու տրամաբանական էր թվում, որ երջանկության մասին մտորելիս այն պետք է տեսնել անցյալում ու ափսոսալ նրա անցողիկության պատճառով: Չէ՞ որ այն, ինչ եղել է անցյալում մեզ հայտնի է, իսկ այն, ինչ լինելու է ապագայում, անհայտ է ու անորոշ: Ավելի հետաքրքիր է կնոջ մասին իմաստասեր գրողի կենսափորձի հիման վրա կատարված դիտարկումը: Ահարոնյանը կնոջը մեծարում է ռոմանտիկ զեղումներով, իբրև սիրո ու պաշտամունքի առարկա, իբրև հմայքի ու գեղեցիկի «կախարդական տիեզերք»: «Կինը բանաստեղծության բանաստեղծությունն է և արվեստի՝ արվեստը, մտածումներեն ամենեն վսեմը, որ մի գեղասեր Աստված հորինեց: Նա հավիտենական աղբյուրն է բարձրագույն հույզերի և վսեմ գործերի. մի աստվածուհի, որի զորությունը սակայն, ինչպես բոլոր աստվածների, պաշտողների հավատի մեջ է» /«Կինը»/ /էջ 52/: Կնոջ նկատմամբ գրողի ուրույն վերաբերմունքի մեջ, հակասական արժևորումներում յուրօրինակ կերպով շեշտվել է տղամարդու կյանքում կնոջ հմայքի ունեցած բացառիկ դերն ու նշանակությունը: Այսպես, օրինակ, մի կողմից՝ նա հավաստիացնում է, թե լավագույն կինն անգամ արժանի չէ սիրող տղամարդու «մի կաթիլ արցունքին» և ափսոսում է կնոջ համար թափած իր արցունքների համար: Մյուս կողմից՝ ավելացնում է, թե «Ի՞նչ փույթ.եթե մի հրաշքով ինձ նորից վիճակվեր վերսկսել անցած կյանքս, նույն աղետավոր արցունքը կը թափեի նույն սիրով: Եվ հետագա բոլոր սերունդները իրենց ամենեն անկեղծ, ամենեն բեղմնավոր արցունքը հավիտենապես դարձյալ կնոջ համար կը թափեն» /«Կինը»/ /էջ 55/:

Ահարոնյանն այս գրքում ևս աշխարհի իրերն ու երևույթները, կյանքն ու մարդուն դիտում է կեցության հավերժական ելևէջումների մեջ /«Տիեզերական ռիթմ»,«Ծերուկ զանգահարը»,«Բեթհովենի նվագի առջև», .«Նվագ»/: Այս հավերժահոս արարման ու կործանման մեջ փորձում է արժևորել մարդու գոյության խորհուրդը, արվեստի նշանակությունը: Ըստ գրողի՝ մահվան սարսափը մարդու մեջ ստեղծել է կրոնի ու աստծու մասին պատկերացումները, որպեսզի դրանց միջոցով անմահության հետ հաղորդակցվելու հնարավորու-

թյուն ունենա կամ իրականացնի հավերժ գոյատևելու յուրաքանչյուրի բնական, մարդկային ձգտում-թուլությունը: Այդպիսի դերակատարություն ունի նաև արվեստը, հատկապես երաժշտությունը: Արվեստում և կրոնի մեջ ամենակատարյալի ու ամենազոր հովանավորի /աստծու/ որոնումներն ապարդյուն են մնում: «Որբուկի պես, որ կեսգիշերին խավարի վախից «մայրիկ» է կանչում-մինչդեռ մայրը վաղուց է մեռած-մենք փնտրում ենք Աստծուն Երգի, Կրոնի և Արվեստի մեջ» /«Բեթհովենի նվագի առջև»/ /էջ 56/: Դժնի իրականությունը նրան դարձնում է իրատես, հեռացնում փուչ պատրանքներից: Մնում է գեթ օրինել կեցության բնական ընթացքն իր հավերժական ինքնավերականգնումի, «հավերժական վերադարձի» մեջ:

Մարդու ճակատագրով մտահոգ գրողին հետաքրքրում է նրա անհատականության ու ինքնատիպության խնդիրը, այն, ինչով անհատը տարբերվում է և առանձնանում մյուսներից: Այդպիսին են հերոսները, բացառիկ խիզախ, ազատամիտ մարդիկ: Ու դժգոհում է «Ծերունին մենավոր» փոքրիկ պատմվածքի ամբոխից հալածված հերոսը. «Գիտե՞ս ինչու են սրանք այսպես հալածում ինձ, որովհետև ես իրենց նման չեմ, բայց չասե՛ս նրանց, չար են..»: «Վա~յ նրան, ով նման չէ ուրիշներին ու ...անզոր է» /էջ 79/,-ամփոփում է ասելիքը հեղինակը:

Ահարոնյանն այնուամենայնիվ շարունակում էր որոնել կեցության մեծ առեղծվածի մեջ մարդուն, մասնավորապես մտավորական անհատին դաժան իրականության մեջ ապրեցնող խթաններ: Ու այդ ուղղությամբ նրա մտորումները բացահայտվում են նաև անապատում, Կահիրեից դուրս գալիս և սֆինքսի մեծ արձանի մոտ հայտնվելիս, ուր նա զրուցում է դերվիշի հետ: Գրողը չի ուզում, որ դերվիշը գուշակի իր ապագան: Նա միշտ իր կյանքն ապրել է անծանոթին դեմ հանդիման գնալով, տառապելով, բայց և փայփայելով հույսի գաղափարը: Հետևաբար, նա ասում է դերվիշին. «Ես չեմ ուզում, որ դու կյանքիս մնացորդը, իմ բախտը ծածկող սև քողը հետ քաշես: Թո՛ղ, որ ես քայլեմ խավարի մեջ. կյանքը շատ է դաժան, շատ է թշվառ, որպեսզի ես այն տեսնեմ բաց աչքով ու դարձյալ ապրեմ: Թո՛ղ որ ապրեմ, դերվի՛շ, կյանքիս արևը ահա թեքվում է դեպի իր մուտքը:

Թո՛ղ հուսամ ու ապրեմ»/«Սֆինքս»/ /էջ 88/: Գրողն ի վերջո, կրկին ու կրկին ուղղակի թե այլաբանորեն իր հույսը կապում էր լուսավորության, հանուն իդեալի նաև ռոմանտիկ խիզախման հետ, որ պետք է իրականանար քաղաքակրթության զարգացման շնորհիվ: Աստծու գոյության ու չգոյության հանդեպ հակասական պատկերացումներով գրողն ուզում էր ոչ միայն իմացության խորքերին հասնել, այլև հաղթահարել իր անձնական վարանքը, անցյալի բերած մղձավանջը: Դիմելով աստծու կասկածելի գոյությանը՝ նա մոռացում էր

խնդրում, քանզի, եթե աստծո կամքով է կատարվում աշխարհում ամեն ինչ, ապա այդ ամենը միայն մոռացության է արժանի /«Մոռացումն»/ /էջ 89/:

Հույսի ու հուսահատության ելևէջներով անցյալը վերապրող գրողի «հոգու կանթեղները» թեև մարել էին, բայց և այնպես նա իրեն համարում է «մի անծանոթ աստվածության կախարդական տաճարի» գունատ ու հոգնած ուխտավոր /«Կախարդական տաճար»/: Կյանքի մայրամուտին հասած Ահարոնյանը «Ստվերներն իջնում են» վերտառությամբ բանաստեղծության մեջ, որը տեղադրված է գրքի վերջում, մի անգամ ևս փորձում է իմաստավորել իրեն հասու վերջնական ճշմարտությունը: Նրա համոզմամբ կեցության վերջին սահմանը իրականությունն է, իսկ «Աստվորից անդին պատրանք է գունատ» /էջ 94/ և փառաբանում է մայր բնությունը: Ցավով վերհիշելով «հին-հին պապերին», նրանց սգավոր ու ողբերգական ճակատագիրը՝ հաստատում էր այն միտքը, որ ապարդյուն են եղել Աստծուն ուղղված նրանց աղերսները, աղոթքը, կրոնում ու եկեղեցում հովանավորություն որոնելու ջանքերը: «Ո՞ւմ եք աղոթում Աստծուց թափուր // Մեր տաճարներում»/էջ 95/: Գրողը ցանկանում է, որ մեր պատմության մեջ տեղի ունեցած ճակատագրական պարտություններն ու ծախողանքը մնային անցյալում, չկրկնվեին նոր սերնդի կյանքում /«Մեր բախտից հեռու՝ ձեր բախտը լացեք» /էջ 95/: Կյանքի ավարտին մոտեցած Ահարոնյանը հոգու խորքում իր ժողովրդի ապագայի հանդեպ, այնուամենայնիվ, լավատեսորեն է տրամադրված.

Նկատենք, որ «Մենությանս մեջ» ժողովածուն եզրափակող այս գործը Ահարոնյանը գրել էր արդեն սփյուռքյան շրջանում և տպագրել 1927 թ. «Կարոտ հայրենի» գրքում /տե՛ս հտ.10, էջ 9-10/: Այս ժողովածուի մասին մեր խոսքն ամփոփելով՝ նշենք նաև, որ աշխարհի պատկերը գրողի այս գրքում և ընդհանուր առմամբ աշխարհայացքում իր մեջ արտացոլում է այն ելևէջները, որոնք դրսևորվել են մարդկության կենսափորձում: Նրանում իրենց ինքնատիպ արտահայտությունն են ստացել «աշխարհի նկարի» և՛ դասական, և՛ հակադասական, և՛ նորդասական պատկերացումները: Ի վերջո իմաստասեր գրողն իր անհատական, ազգային ու համամարդկային իդեալներն ու հույսը կապել էր ողջ գոյի առաջընթաց զարգացման հետ և կանգ առել աշխարհի պատկերի մասին նորդասական հայեցակարգի վրա, ուր «Կեցության զարգացման տեմպն այստեղ դիտվում է իբրև նրա անվերջանալի ինքնակազմակերպում»[2]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ահարոնյան Ա., Մենությանս մեջ, Նյու Յորք, 1938, էջ 5: Այս գրքից մյուս մեջբերումները կատարելիս բնագրին կից նշել ենք էջը:
2. Хализев В. Е.,Теория литературы, М., Высшая школа, 2004, с 25.